

ներ՝ թէ «բանուարա-դիւղացիական պետութիւնը» բոլորի դանկը պիտի ջարդէ...

Այդքան ինքնավստահ չէր Ռակոպիսկի, երբ կը ճառէր նախանցեալ տարի Հայաստանի ծայրաքաղաքում նոյն շարատանջ նիւթին շուրջը.

— «Մենք մենակ ենք — կ'ըսէր Ռակոպիսկի, Սովետներու Լոնտոնի դեսպանը, Երեւանում արտասանած իր մէկ ճառին մէջ — մենք մենակ ենք, կղզիացած, տասնեակ ու տասնեակ հարուստ, փորձուած, կազմակերպուած, մինչեւ ատամները զինուած, կապիտալիստական պետութիւններու շրջապատում»*) :

Այո՛. եւ արեւմտեան նոյնիսկ մէկ հատիկ պետութեան հարուածներուն երկար չպիտի դիմանայ կարմիր բանակը, որ քաջ է միայն Դէնիկիներու եւ Կոլչակներու հանդէպ...

Բաւական չէ ամէն առթիւ թմբկահարել ու պարծենալ, որ սովետական պետութիւնը 132 միլիոն բնակիչ ունի եւ որ տարածութեամբ նա երկրագնդի վեցերորդ մասը կը կազմէ... Խնդիրը հոն է, որ անոր բանակը չի կրնար մրցիլ անգամ փոքրիկ Զուիցերիոյ բանակին հետ: Խնդիրը հոն է, որ ան չկրցաւ դիմանալ անգամ լեհ զօրքերու դրոհին:

Վիթխարի երկիր մը — անշուշտ: Բայց այդ երկրի արդիւնաբերական, Ֆինանսական ոյժերը պարզապէս ողորմելի են, իսկ վերը մենք տեսանք, որ դալոց պատերազմին մէջ վճռական դերը պիտի պատկանի արդիւնաբերական ոյժերուն... Թեթեւ դրոհ մը Արեւմուտքէն, պիտի բաւէ՝ օդը ցնդեցնելու բուլշեւիկեան հսկայածաւալ ու փխրուն չէնքը...

Ո՞վ պիտի փրկէ դայն... Կասկածելի է,

*) ՏԵ՛ս «Խորհրդային Հայաստան» 1925 թ., թիւ 60:

թէ արեւմտեան աշխատաւորութիւնը կամենայ դիմել լուրջ միջոցներու՝ այդ դրոհին առաջն առնելու համար: Նա այնքա՛ն է արդէն յուսախարուած «բանուարա-դիւղացիական պետութեան» կարմիր փորձերէն...

Աշխարհէն կտրուած ու լքուած, զուրկ արեւմտեան զանգուածներու դործօն աջակցութենէն, զուրկ հզօր դաշնակիցներէ, փոխառութիւններէ, դրամազլխէ, «համաշխարհային յեղափոխութեան» յոյսերը խորտակուած, ներսը՝ կիսամերկ ու կիսաքաղց ժողովուրդ մը եւ համասփիւռ աւերած — Խորհրդային Ռուսաստանը, որու հետ կապուած է հայութեան ճակատագիրը, որու մէջ կ'ապրին հայ ժողովուրդի մեծ զանգուածները, մեր բոլոր յոյսերն ու տենչանքները — Խորհրդային Ռուսաստանը, տարաբախտաբար, հսկայ մըն է՝ կաւէ ռաֆերու վրայ...

Այսպիսի պարագաներում կարելի է, երեւակայել թէ ինչ կը լինի հայ ժողովուրդի վերձակը, եթէ ազադայի միջազգային բախումներու ատեն թիւրքիան յայտնուի Ռուսաստանի հակառակորդ բանակին մէջ: Իսկ այդ անհնարին բան մը չէ... Թիւրք-ռուսական ներկայ «սերտ» յարաբերութիւնը շան եւ կատուի բարեկամութիւնն է: Թիւրքիոյ վարքադիմը դեռ շատ փոփոխութիւններու կրնայ ենթարկուիլ: Անգլիան, Մուսուլի դատը շահելէն յետոյ, կը ձգտի թիւրքիան սիրաշահիլ եւ կրնայ ի վերջոյ դատել այն Ռուսիայէն, ի հարկին մղելով թիւրքերը դէպի Կովկաս...

Այսպէս խարխուղ ու երերուն է միջազգային խաղաղութեան դատը... Աշխարհը վերստին հրաբուխի վրայ է, ինչպէս 1909-12 թուականներուն եւ վա՛յ այն ազգին, որ վրձնական պահուն անպատրաստ կը դտնուի՝ իր ինքնապաշտպանութեան հոգսը հոգալու...

